ՄԻԱԲԵՎԵՌ ԱՇԽԱ՞ՐՀ, ԹԵ՞ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ

Նաիրա Կյուրեղյան[*]

Չնայած ձևավորվող այն կարծիքին, թե Եվրասիական միությունն ու Եվրոպական միությունը միմյանց չհակադրվող ինտեգրացիոն գործընթացներն են, այնուամենայնիվ, հնարավոր չէ չնկատել, որ Ռուսաստանի կողմից եվրասիական ինտեգրմանն ուղղված կոնկրետ գործողություններն արժանանում են Արևմուտքի կոշտ հայտարարություններին: «ԱՄՆ-ում կփորձեն թույլ չտալ տնտեսական ինտեգրացիայի անվան տակ Խորհրդային Միության նոր տարբերակի ստեղծումը»,- դեկտեմբերի 6-ին Դուբլինում մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել է Հիլարի Քլինթոնը: Նախկին ԽՍՀՄ տարածքում ինտեգրման գործընթացները նոր չեն, վաղուց արդեն իրականություն են՝ ՀԱՊԿ-ը, Մաքսային միությունը, Եվրասիական տնտեսական ընկերակցությունը, Ռուսաստան-Բելառուս միութենական պետությունը: Փորձենք հասկանալ՝ արդյո՞ք տնտեսական համագործակցության ընդլայնմանը, միգրացիոն և սահմանային արգելքների վերացմանն ուղղված ջանքերի ակտիվացումը, ինչի մասին իր «Նոր ինտեգրացիոն ծրագիր Եվրասիայի համար. ապագա, որը ծնվում է այսօր»[1] նախընտրական հոդվածում նշում էր Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինը, հարաբերությունների սրման պատճառ են հանդիսանում:

---

[*] «Տիգրիս» քաղաքական և տնտեսական հետազոտությունների կենտրոն, վերլուծաբան:

[1] *Путин В.В.,* Новый интеграционный проект для Евразии-будущее, которое рождается сегодня. Известия. 3 октября 2011.

Սառը պատերազմի հետևանքով և ԽՍՀՄ փլուզմամբ դադարեց գոյություն ունենալ երկբևեռ աշխարհակարգը: Արտաքուստ վերացան աշխարհաքաղաքական և գաղափարական հիմնական հակադրությունները, հաստատվեց մեկ գաղափարախոսության գերակայություն, և նորանկախ երկրները սկսեցին ինտեգրվել տնտեսական, քաղաքական և գաղափարական մեկ համակարգի մեջ: Առանց միջազգային իրավունքի հարթությունում որևէ փոփոխության՝ փաստացի սկսեց գործել նոր՝ միաբևեռ աշխարհակարգը, որը ստացավ տարբեր գնահատականներ և ձևակերպումներ: Ֆրենսիս Ֆուկույաման հայտարարեց պատմության ավարտը[1], որը նշանակում էր լիբերալ-դեմոկրատիայի՝ որպես համաշխարհային կառավարման միակ համընդհանուր (ունիվերսալ) համակարգի, լիիրավ հաղթանակ: «Տխուր է պատմության ավարտը: Պայքար հանուն ճանաչման, վերացական նպատակների համար կյանքը վտանգելու պատրաստակամություն, գաղափարական պայքար, որը պահանջում էր քաջություն, երևակայություն և իդեալիզմ… և այս ամենի փոխարեն՝ տնտեսական հաշվարկ, տնտեսական անվերջանալի խնդիրներ, հոգածություն բնապահպանական հարցերում և սպառողների քմահաճ պահանջների բավարարում»: Միաբևեռության այլ գնահատական տվեց ամերիկացի հրապարակախոս, նեոկոնսերվատոր Չարլզ Կրաուտհամերը: Ստեղծված իրավիճակը նա գնահատեց որպես միաբևեռության պահ: Ենթադրությունն այն մասին, թե երկբևեռ աշխարհի փլուզումը կծնի բազմաբևեռ աշխարհ և ուժի բևեռներ կդառնան Ճապոնիան, Գերմանիան, Չինաստանը և Ռուսաստանը, չարդարացավ, ասում է նա: Սառը պատերազմից հետո աշխարհը չդարձավ բազմաբևեռ, այն միաբևեռ է, և համաշխարհային ուժի կենտրոնն անառարկելիորեն պատկանում է գերտերություն ԱՄՆ-ին և նրա արևմտյան գործընկերներին [1]: Ամերիկացի լրագրող Ռ.Կապլանը

[1] www.politnauka.org/library/dem/fukuyama-endofhistory.php

ԱՄՆ-ը հռչակեց «Նոր կայսրություն» [2], կանխատեսվում էր «Նոր ամերիկյան դարի»[1] գալուստը, որը պետք է ընթանար արևմտյան ունիվերսալ արժեքների լիակատար հաղթանակով: Եվ նույնականացված կամ գլոբալացված աշխարհում, երբ հասարակությունների արժեքային համակարգերը ձևավորվում են միանման՝ լիբերալ-դեմոկրատական գաղափարներով և այլընտրանքային գաղափարներն ուղղակի մարգինալացվում են, իսկ զարգացման այլ ուղիով ընթացող պետությունները պիտակավորվում են որպես «տապալված, չկայացած» պետություններ, այդպիսի աշխարհում այլևս հակասություններ չպետք է լինեն:

Գլոբալացվող աշխարհում մեկ բևեռի առկայությունը փոխեց նախկին հավասարակշռությունը, և պետությունները սկսեցին վերադասավորվել, ամերիկացի սոցիոլոգ Է.Վալերսթայնի ձևակերպմամբ՝ կենտրոնի կամ հեգեմոնի շուրջը: Համաձայն Վալերսթայնի տեսության՝ աշխարհ-համակարգերն ունեն եռաստիճան կառուցվածք՝ կենտրոն, կիսածայրամաս և ծայրամաս [3]: Այսօր կենտրոնական դիրքը զբաղեցնում են հյուսիսի հարուստ երկրները, կիսածայրամասայինը՝ զարգացող երկրները և ծայրամասում հարավի աղքատ երկրներն են: Ընդ որում՝ աշխարհամակարգում առավել բարձր դիրք գրավող երկիրն առավելություն ունի ավելի ցածր դիրքում գտնվող երկրների նկատմամբ և այդ առավելությունն օգտագործում է իր շահերը սպասարկելու համար: Ճիշտ այսպես վերադասավորված միաբևեռ աշխարհն այսօր իրականություն է և ընդլայնում է իր ներգործության տարածքները, ինչի ապացույցն են նաև Մերձավոր Արևելքում ընթացող իրադարձությունները: Հետզհետե ավելի հստականում են միաբևեռության միտումները՝ ՄԱԿ դերի նվազում, Վեստֆալյան համակարգի խարխլում, որն արտահայտվում է ազգային պետությունների ինստիտուտի ոտնահարմամբ: Եթե մինչև

[1] www.newamericansentury.org

Լիբիայում տեղի ունեցած դեպքերը, օտարերկրյա միջամտություններն արդարացնելու համար համաշխարհային հանրությանը ներկայացվում էր որևէ պատճառաբանություն (օրինակ, Դ.Ռամսֆելդի սրվակը), ապա այսօր բավարար են ուղղակի հայտարարությունները թիրախային երկրում ժողովրդավարական արժեքների ոտնահարման վերաբերյալ, որպեսզի տվյալ երկրում, ինֆորմացիոն համապատասխան աջակցությամբ, սկսվեն ներքին խմորումները և ռազմական գործողությունները: Աշխարհը ձևափոխվում է կենտրոնի երկրների, իսկ ավելի ճիշտ՝ մեկ գերտերության թելադրանքով և շահերի համապատասխանությամբ:

Այս իրադարձությունները համաշխարհային գործընթացներում դիրքերը թուլացրած Ռուսաստանում գնահատվեցին որպես սպառնալիք՝ ուղղված ոչ միայն իրենց աշխարհաքաղաքական շահերին, այլև ուղղակի սպառնալիք երկրի ֆիզիկական գոյությանը: Բազմաթիվ մարտահրավերների հետ միասին, հատկապես անհանգստացնող էին Հյուսիսային Կովկասում արմատական ուժերի չթուլացող ակտիվությունը և միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ներքին ընդդիմության նոր ալիքի բարձրացումը: Եվ եթե ներքին գործընթացներում սկսվեցին մի շարք կարևոր օրենսդրական փոփոխություններ, որոնց ենթատեքստը երկրի սուվերենության վերականգնումն էր, ապա արտաքին քաղաքականության կարևոր առաջնահերթությունը դարձավ եվրասիական ինտեգրման գործընթացը: Եթե այն փորձենք դիտարկել Վ.Վ. Պուտինի հայտնի մյունխենյան ելույթի[1] համատեքստում, ապա եվրասիական ինտեգրացիան պետք է վստահաբար գնահատել որպես բազմաբևեռ աշխարհի կառուցման մոդել:

Բազմաբևեռ աշխարհը, որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ, այսօր գոյություն չունի, բայց հարցի սոցիոլոգիական գնահատականը թույլ է տալիս տեսնել դրա ուրվագծերը տարբեր

[1] www.archive.kremlin.ru/appears/2007/02/10/1737

քաղաքական գործընթացներում և քաղաքական գործիչների հայտարարություններում: Եվ եթե Եվրասիական միությունը հավակնոտ հայտ է՝ դառնալու ձևավորվող աշխարհակարգի բևեռներից մեկը, ապա պարզ է դառնում գերտերությունների կողմից կոշտ հայտարարությունների պատճառը: Մանավանդ որ Արևմուտքում Ռուսաստանի համար տեսնում էին զարգացման բոլորովին այլ սցենար:

Ակտիվացող ինտեգրացիոն գործընթացներում ամենաքննարկվող հարցերից է ինտեգրման քաղաքական ուղիների որոնումը: Ինչպիսին կլինի բազմաբևեռ աշխարհը՝ դժվար է ասել: Մասնագետները փորձում են տալ տեսական ձևակերպումներ՝ համարելով, որ բազմաբևեռ աշխարհում որպես հիմնական դերակատար կարող են հանդես գալ քաղաքակրթությունները՝ հղում կատարելով Սամուիլ Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» հայտնի ծրագրային հոդվածին, որտեղ նա քաղաքակրթություններն առանձնացնում է որպես պատմության հիմնական սուբյեկտներ [4]: Ի տարբերություն Ֆրենսիս Ֆուկույամայի, որը կարծում էր, որ աշխարհի ապագան վճռված է և ոչինչ այլևս չի խանգարելու գլոբալացման սահուն ընթացքին, Հանթինգտոնը տրամագծորեն այլ տեսակետ է առաջ քաշում: Նա կարծում է, որ երկբևեռ աշխարհի փլուզումը չվերացրեց հակասությունները, և ուրեմն պատմությունն ավարտված չէ, դրա փոխարեն քաղաքական թատերաբեմ են բարձրանում նոր դերակատարներ՝ քաղաքակրթությունները, որոնց միջև ծագած հակասություններով էլ պայմանավորված կլինի ապագա աշխարհը:

Այս համատեքստում հասկանալի է դառնում և ռուս ինտելեկտուալ էլիտայի անդրադարձը դասական եվրասիականության գաղափարներին: Անցյալ դարի 20-ականներին Եվրոպայում, առաջին ալիքի ռուս վտարանդիների շրջանում ծնված այս գաղափարական քաղաքական հոսանքը դիտարկում է Եվրասիան որպես առանձին և ինքնուրույն քաղաքակրթություն: Ժխտելով եվրոպական արժեքների

ունիվերսալությունը՝ նրանք գտնում էին, որ Ռուսաստանը, երբեք չլինելով մոնոէթնիկ պետություն, ձևավորվելով տարբեր էթնոսների փոխներգործության արդյունքում և հետագայում կրելով թուրանական հզոր ալիքի դրական իմպուլսը, կարողացել է ստեղծել մշակութային, լեզվական, կրոնական և հոգևոր բազմազանությամբ ինքնատիպ քաղաքակրթություն՝ ոչ արևմուտք, ոչ արևելք, ոչ Եվրոպա, ոչ Ասիա, այլ Եվրասիա: Եվ Պյոտր Սավիցկու՝ եվրասիական շարժման հիմնադիրներից մեկի խոսքերով՝ այդ կախարդական ու զարմանալի երկիր Ռուսաստանը, արևմտյան ու արևելյան միաժամանակ, պետք է հանդիսանար եվրասիական ժողովուրդների ու էթնոսների, «ծաղկող բարդությունների» հոգևոր, մշակութային, կրոնական ինքնատիպությունների պաշտպանն ու երաշխավորը:

Եվրասիական կարևոր թեզերից մեկը վեր է հանում աշխարհագրական տարածքի կանխորոշիչ ազդեցությունն այդ տարածքը զբաղեցնող մշակույթների, պետությունների վրա, որի արդյունքում էլ ձևավորում է քաղաքակրթական որոշակի, ինքնատիպ տեսակ: Պ.Սավիցկու աշխարհագրական դետերմինիզմի ուսմունքը (*месторазвитие*) [5], Ն.Դանիլևսկու պատմամշակութային տիպերի [6] (որը հետագայում զագացրին Օ.Շպենգլերը, Ա.Թոյնբին), Կ.Շմիտտի երկրի նոմոսի [7] մասին ուսմունքները բարձրացնում էին քաղաքակրթական ինքնատիպությունների և դրանց օբյեկտիվ գործոններով կանխորոշվածությունների հարցերը: Եվ հետևաբար, մեկ ընդհանուր և ունիվերսալ քաղաքակրթության գոյության մասին պնդումները զրկվում են որևէ հիմնավորվածությունից:

Բազմաբևեռ աշխարհի կառուցման տեսական հիմնավորման կարևոր քայլերից մեկը քաղաքակրթությունը (որը սոցիոմշակութային կատեգորիա է) քաղաքագիտական հարթություն բերելն է, դրան իրավական ձևակերպում տալը: Քաղաքակրթական առանձնահատկություններով միավորման օրինակը՝ Եվրամիությունը, արդեն

իրականություն է (այս առումով Թուրքիային Եվրամիությանն անդամակցությունը մերժելը կարելի է դիտարկել այլ քաղաքակրթության պատկանելությամբ): Կփոխառվե՞ն Եվրամիության կազմավորման սկզբունքները, թե՞ կգտնվեն միավորման նոր տարբերակներ՝ պարզ չէ: Օրինակ, շրջանառության մեջ է դրվում Կ.Շմիտտի «Մեծ տարածքների» ինտեգրացիոն մոդելը, ըստ որի՝ մշակութային-տնտեսական-ռազմավարական հարթություններով ինտեգրված մեծ տարածքները սահմանափակվում են արտաքին ներգործություններից:

Այսուհանդերձ, Եվրասիական ինտեգրացիան բաց գործընթաց է: Կա հրավեր մասնակցելու նոր աշխարհակարգի կազմավորմանը՝ սեփական գաղափարներով, սեփական ինքնատիպության պահպանման ծրագրով, ինչը հենց դասական եվրասիականության գաղափարախոսության ամենակարևոր բաղադրիչն է՝ տարբեր ազգերի ու ժողովուրդների ներդաշնակ գոյակցումը: Սա ինքնըստինքյան ենթադրվող գործընթաց չէ, այլ կարող է լինել կամային, ինտելեկտուալ աշխատանքի արդյունք: Քննարկման մասնակցությունը միաժամանակ նշանակում է մասնակցություն այդ աշխարհի կառուցմանը, և ամենակարևոր հարցերից մեկը, թերևս, մեր քաղաքակրթական պատկանելության հարցի հստակեցումն է: Այս հարցի հստակ պատասխանն էլ ցույց կտա ինտեգրման ուղղությունը:

Կարելի է ենթադրել, որ եվրասիական և եվրոպական ինտեգրացիաները իրար չհակասող գործընթացներ են, բայց պետք է պատրաստ լինել և հակառակ ընթացքին՝ նկատի ունենալով աշխարհաքաղաքական հակասությունները, որոնք երբեմն պատմության մեջ շտկումներ են անում իրենց հատուկ ներքին տրամաբանությամբ՝ հաշվի չառնելով ոչ մի այլ գործոն:

Ապրիլ, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Krauthammer Ch.,* The Unipolar Moment // Foreign Affairs, 1990/1991.
2. *Kaplan R.D.,* Imperial Grunts: On the Ground with the American Military,from Mongolia to the Philippines to Iraq and Beyond. NY: Vintage.
3. *Валлерстайн И.,* Анализ мировых систем и ситуация в современном мире, СПБ., Университетская книга, 2001.
4. *Хантингтон С.,* Столкновение цивилизаций, М., АСТ, 2006.
5. *Савицкий П.Н.,* Континент Евразия, М., 1997.
6. *Данилевский Н.Я.,* Россия и Европа, СПб., 1995.
7. *Шмитт К.,* Новый номос земли // Элементы, № 3, М., 1993.

ОДНОПОЛЯРНЫЙ МИР ИЛИ ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ?

Наира Кюрегян

Резюме

Несмотря на формирующееся мнение о том, что Евразийский союз и Европейский союз – не мешающие друг другу интеграционные процессы, тем не менее невозможно не заметить, что направленные на евразийскую интеграцию конкретные действия России удостаиваются жесткого противодействия Запада. Тем не менее процесс евразийской интеграции стартовал, и нас приглашают принять участие в формировании нового миропорядка – со своими собственными идеями, программой сохранения своей идентичности, что как раз и является важнейшим компонентом евразийской интеграции – гармоничное сосуществование разных народов и наций.